

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Русская Мысль“, հոկտեմբեր
Մալորօսների ուրախ գրականու-
թեան մասին հազիւթէ լսած լինի
մեր ընթերցողը հուցէ միայն
Եկվչինկոյի առունն է նրան լայտ-
նի, Միջնդեռ վերջին քառորդ դա-
րում մալորօսական գրականութիւնը
և մասնաւորապէս նրա բանաստեղ-
ծութիւնը մեծ քայլ է արել զէպի
առաջ: 1900 թուականին պիեֆում
հրատարակուած են լաւագոյն մա-
նըր ոտանաւորների մի ժողովածու
(անտօլօգիա) «Վկի» անունով, որ
նորերու ունեցաւ երկրորդ լրացրած
հրատարակութիւնը Յ հասորում
Ալդ ժողովածուի մէջ զետեղուած
են մօտ 50 մալորօս բանա-
ստեղծների ընտիր գրուածքնե-
րը Մալորօսական գրականութեան
վրայ ոշագրութիւն է դարձել և
երրորդական քննադատութիւնը
.Рус. Мысль“-ի համարում „ՀԵ-
ВИЕКИ украинской поэзии“, վեր-
նագրի տակ տպուած է մի հետա-
քրքրական լոգուած, որի մէջ ա-
ռանձին կանգ է առնուած երկու
մալորօս գրողների վրայ, մէկը գր-
րանցից տիկին Լ. Եսեա Ռեկրախն-
կան է, իսկ միւսը՝ պ. Կրըմսկին:

Լ. Եսեա Ռեկրախնկալի ներշնչ-
անքի հիմնական գիծն է անկեղծ
ուր զէպի հայրենիքը և խեղճերը,
ինչ ազգութիւնից էլ լինեն դրանք:
Բանաստեղծուու իգէալն է եղբար-
րութիւն, հաւասարութիւն և ազա-
տութիւն նրա երգը—Ծերմ բողոք է
անարդարութեան դէմ և խանդա-
վառ կոչ՝ մաքաւելու մի լաւագոյն
ապագայ աստեղծելու համար. Ներկան
նրան պատճառում է թափսիթ և քա-
մում է աղի արտասուք նրա աշխե-

րից, ասկայն լուսահատուել նա չը
զիսէ: Խոյն համակրելի գծերով են
Ներկարանում և տղամարդ բանա-
ստեղծները, որոնցից ամենաաշքի
ընկնողն է Կրըմսկին, որ եթէ չենք
սիսաւում, և ազ ձեմարանում արա-
րերէնի պրօֆէսօր է:

„Журналъ для всѣхъ“, հոկտեմ-
բեր: Այս համարում, ի միջին պայց,
տպուած է ոռուաց առաջին հրա-
պարակախօս Շաղիշչեվի պատկերը
և կենսագրութիւնը:

Քաղիշչեվը հոչակ ստացաւ ուս-
ուաց գրականութեան մէջ 1790 թր-
ականին իր „Путешествие изъ Пе-
тербурга въ Москву“ գրուածքով:
«Մարդու լույս աշխարհ է տեսնում
ազատ և հաւասար մէկը միւսին»,
զրում էր նաև նա համարձակ լայտ-
նում էր որ նորուութիւնը հակա-
սում է բանականութեան և բար-
րական զգացմունքի ամենաստարա-
կան պահանջներին: Բաղիշչեվը
առաջարկում էր կալուածաներերին
անլազարդ ազատու և նորուերին: Նա
խիստ լարձակուում էր տիրող ան-
արդար կարգերի վրայ Նկատերի-
նա կարսուհին կարդալով այդ
ձանապարհորդութիւնը սաստիկ
զարյանում է և խիստ քննութեան
ու զատի ենթարկում հեղինակին: Քաղիշչեվին մահուան են դասա-
պարտում Կալպրուհին, իրք ողոր-
մութիւն, մահուան պատիճը փո-
խարինեց լաւիահնական աքսորով
Սիրիու:

Աղատ մարդու անրունարարելի
իրաւունքների առաջին քարոզիչն
էր Բաղիշչեվը Խուսաստենում: Իր
ազատ և վեհ մտածողութեան հա-

մար նա միայն աքսոր, տանջանք-ներ և անարգանք կրոց իր կեանքում, սակայն նրա համարձակի խօսքը կալծակի նման լուսաւորեց այն ժամանակուա խասար իրականութիւնը և ցնցեց անշարժութեան մէջ թիացած ուսական միաքը:

„Մակ“, №№ 230, 236, 236.
մեծ հետաքրքրութեամբ են կարդացուում Աստրիակում Եցօ-ի կատարած ուղևորութեան թռուցիկ նկարագրութիւնները Աստրիայում կորած հայ գաղութների ժամանակակից դրութիւնը շատ կենդանի գոտներով են գորս քերուած այդ լոգուածներում: Շատ ցանկալի կը լինէր, որ հեղինակը հնարաւորութիւն ունենար այցելել նաև նումանիակի, Անդարիայի և Բուլղարիայի հայ գաղութները և ծանօթացնել մեզ նորպայում փառած հայ ազգի արդ փշրանքների հետ:

Վրաց մամուլը. Նեղուն աղքանութեան հարցում գերանչող նշանակութիւն ունի, սակայն „իմփերիակի“ խմբագրութիւնը ուզում է օգտուել այդ հշմարտութիւնից, հետեւալ անեթեթ եղրակացութիւնը անելու համար, մի կողմ թղոնելով պատմական ալլ հանգամանքները: Պատմութիւնից լայտնի է, որ հայերը գաղթել են, ինչպէս շատ ուրիշ տեղեր այսպէս և հարեան երկիր Վրաստանը: Եղտափ, ովչապատուած լինելով հոծ վրացական տարրով, հայերը մոռացել են իրանց մայրենի լեզուն և սկսել են խօսել վրացերէն:

Դոյն ձևով Արմի հայերը խօսում են թաթարերէն, Պոսկուայի հայերը ռուսերէն, Անդարիայի հայերը ունգարերէն, Գալիցիայի հայերը լիներէն, Խումանիայի հայերը ուսմաներէն, Հնդկաստանի հայերը

անդլիւրէն, Անսարիայի հայերը թիւքրերէն և ալլն և ալլն Արդ, վրաց աղքասէրները, ցանկանալով մեծացնել իրանց ազգի թիւը, սկըսել են քարոզել և համոզել նախ հայ կաթոլիկներին, թէ դրանք վըրացիներ են և, շնորհիւ այն հանդամանքի, որ ազգային եկեղեցուց անջատուած այդ տարրը հեշտ է ենթարկում վրացական պրօպագանդայի (հայերէն չեն կարդում), զանազան Խաչիկեաններ, Զաքարեաններ և ալլն ճիշտ որ իրանք էլ իրանց սկսեցին վրացիկաթոլիկ համարել, որովհետեւ ոչ լեզուն, ոչ ինքնաճանաչութիւնը և ոչ ազգային եկեղեցին դրանց չէր կապում միւս հայութեան հետ: Բայց „իմփերիան“ չի բաւականում այդ լազմութեամբ: Նա այժմ պընդում է, որ Վրաստանի „գրիգորեականները հայեր չեն, այլ վրացիները որոնք սակայն պատկանում են լուսուորչական զաանութեան: Հետեւարար, հայոց կաթոլիկոսը պէտք է յարգի այդ „վրացի-գրիգորեականների“ մալրենի լեզուն (վրացերէնը և կարգադրի որ Ներսիսեան դպրոցում աւանդուի վրացերէնը, ժամանակագիր բոլոր եկեղեցիներում կատարուի վրացերէն և ալլն և ալլն: Այդ լոգիկայով հեշտ է պնդել որ Արիմի թաթարախօս հայերը իսկապէս թաթարգրիգորեականներ են, կեսարիաի թրքախօս հայերը՝ թիւքր գրիգորեականներ են, Հնդկաստանի անգլիախօս հայերը՝ անգլիացի գրիգորեականներ են և ալլն և ալլն: Թուղթը ամեն բան տանում է, իսկ „համարձակութիւնը քաղաքներ է առնում...“ Այդ լաւ խրառէ հայերին, որոնք օտար երկրում իրանց մայրենի լեզուն աւելի հեշտ են փոխում, քան քամելէօնը իր գոյնը...